

ՄԵԾ ԲԵՆՆՈՒՄԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՅՐՈՒԴԱՅԻՆ ԱՎՏՈԳԱՑՔԵՆԵՐԻ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԸՆԴԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՏՈՒՄ Ը.Բուդաղյան, Վ.Ժամկոչյան


ԱՏՍ-ների վառելիքային շահավետության և քարշարագային հատկանիշների ուսումնասիրման համար մշակված է կոնկրետ երթուղով նրա շարժման նմանակային մաթեմատիկական մոդել, որը հնարավորություն է տալիս գնահատել ԱՏՍ-ի տեխնիկական պարամետրերի և շահագործական պայմանների ազդեցությունը վերոհիշյալ ցուցանիշների վրա: Նշված մոդելի հավաստիության և ճշտության գնահատման համար, ինչպես նաև տեսական հետազոտություններ կատարելիս անհրաժեշտ ելակետային տվյալների որոշման նպատակով իրականացվել են փորձնական հետազոտություններ: Բնականաբար ԱՏՍ-ների փորձարկումների ժամանակ շարժման ռեժիմներն ընտրված են այնպես, որ ստացված արդյունքներն առավել քիչ կախված լինեն ինչպես վարորդի սուբյեկտիվ վարքից, այնպես էլ շրջակա միջավայրից:

Մայրուղային ԱՏՍ-ների վառելիքային շահավետությունը գնահատելու համար օգտագործվել է նրա վառելիքա-արագային բնութագրի փոփոխական երկայնական պրոֆիլով ճանապարհի վրա, որպես առավել բնութագրական ցուցանիշ նման դասի ԱՏՍ-ների համար, որը վառելանյութի Q_{sep} միջին ճանապարհային ծախսի և շարժման V_{cp} միջին արագության կախվածությունն է V_p թույլատրելի արագությունից: Որպես հետազոտման օբյեկտ է ընտրվել ՄԱԶ-5432+ՄԱԶ-9397 ավտոգնացքը: Փորձարկումները կատարվել են ԳՈՍ 20306-90-ի պահանջներին խիստ համապատասխան:

Ավտոգնացքի նշված բնութագրի ստանալու համար Մ-1 (Երևան-Գյումրի) մայրուղու վրա ընտրվել է 14 կմ երկարությամբ ճանապարհա-հատված, որի տարբեր տեղամասերի երկայնական պրոֆիլի բեթոնյան անկյունները համապատասխանում են փորձարկումները կանոնակարգող ԳՈՍ-ի պահանջներին: Բնութագրի յուրաքանչյուր կետի որոշման ժամանակ ԱՏՍ-ի շարժումը չափման տեղամասում կատարվել է հնարավոր առավելագույն, բայց թույլատրելի չգերազանցող արագությամբ: Թույլատրելի առավելագույն արագությունը տրվում է սկսած 40 կմ/ժ-ից մինչև ԱՏՍ-ի առավելագույն արագությունը, իսկ արագության արժեքները նշված տիրույթում տրվում են նրա տասնապատիկով: Փորձարկման ժամանակ վարորդը պահպանել է փորձարկումները կանոնակարգող ԳՈՍ 20306-90-ի բոլոր պահանջները:

Պատահական դիմադրությունների ազդեցությունը չեզոքացնելու նպատակով այս փորձարկումները կատարվել են երկու հակադարձ ուղղություններով, և որպես վերջնական արդյունք վերցվել է դրանց միջին թվաբանականը: Փորձարկման ընթացքում յուրաքանչյուր տեղամասի համար չափվել է անցման ժամանակը և վառելանյութի բացարձակ ծախսը:

Ըստ փորձարկման մեթոդոլոգիայի փոփոխական երկայնական պրոֆիլով ճանապարհում ԱՏՍ-ի վառելիքա-արագային բնութագրի որոշման ժամանակ վառելանյութի չափման համար կիրառվել է ծավալային մեթոդը, որը սխեմատիկորեն պատկերված է նկար 1-ում, որտեղ 1-ը վառելանյութի հիմնական բաքն է, 2-ը վառելանյութի ցածր ճնշման միջին է, 3-ը եռաբայլ ծորակ է, 4-ը



Նկար 1 ԱՏՍ-ի վառելանյութի ծախսի ծավալային չափման սխեման

չափիչ բաքն է, 5-ը այրման խուցն է, իսկ 6-ը խողովակ է, որով դեպի սնման համակարգ է վերադառնում վառելանյութի ավելցուկը: Եռաբայլ ծորակն ունի 3 դիրք


1-ին դիրքում շարժիչը սնվում է հիմնական բաքից: Չափման տեղամասի սկզբում ծորակը դրվում է 2-րդ դիրքում և դեպի շարժիչ վառելանյութը մղվում է արդեն չափիչ բաքից: Ծորակի 3-րդ դիրքն անհրաժեշտ է չափիչ բաքը հիմնական բաքից վառելանյութով լիցքավորելու համար:

Ջետազոտվող ԱՏՍ-ի հաշվարկային և փորձնական վառելիքա-արագային բնութագրերը բերված են նկար 2-ում: Ինչպես երևում է նկարում, մշակված մաթեմատիկական մոդելի օգնությամբ ստացված տվյալներն ապահովում են պրոցեսների ինչպես որակական, այնպես էլ քանակական կողմերը, այսինքն՝ ավտոգնացքի նշված ցուցանիշների հաշվարկային և փորձնական ճանապարհներով ստացված բնութագրերը միանգամայն փոխհամատեղելի են: Նշված բնութագրի փորձնական և հաշվարկային արդյունքների շեղման արժեքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Արագային և վառելիքային բնութագրերի հաշվարկային արդյունքների շեղման մեծությունները փորձնական արդյունքներից

Ավտոգնացք	Շեղումները, %			
	արագային բնութագիր	միջինը	վառելիքային բնութագիր	միջինը
ՄԱԶ 5432 + ՄԱԶ 9397	2,6 7,4	4,5	0,4...6,1	2,5



Նկար 2 ԱՏՍ-ի վառելիքա-արագային բնութագրերը փոփոխական երկայնական պրոֆիլով ճանապարհի վրա
— հաշվարկային արդյունքներ
--- փորձնական արդյունքներ


Ինչպես երևում է բերված նկարում և աղյուսակում, ավտոգնացքի արագային և վառելիքային բնութագրերի հաշվարկային ու փորձնական արդյունքների միջին տարբերությունները չեն գերազանցում 5%-ի սահմանը, որը միանգամայն թույլատրելի է տեսական հետազոտություններ կատարելու համար:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված գնահատումները, կարելի է նշել, որ ԱՏՍ-ի կոնկրետ երթուղով շարժման մշակված նմանակային մաթեմատիկական մոդելը թույլ է

տալիս բավարար ճշտությամբ որոշել նրանց քարշարագային հատկանիշների և վառելիքային շահավետության ցուցանիշները: Այն հանգամանքը, որ փորձնական և հաշվարկային արդյունքների շեղման նշված չափերն ընդհանուր առմամբ էականորեն չեն կարող ազդել խնդրի լուծման վերջնական արդյունքների վրա, թույլ է տալիս մշակված նմանակային մաթեմատիկական մոդելը կիրառել Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող տարբեր USU-ների տեխնիկական պարամետրերի օպտիմալացմանն ուղղված աշխատանքներում:

**ԹՐԹՈՒՐԱՎՈՐ ՄԵՔԵՆԱՅԻ ԼԱՅՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒՐՅՈՒՆԸ
ԲԱՐՉՐԱՑՆՈՂ ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ՄԱՍ**
Ա. Եսյան

Հայաստանի Հանրապետության տարածքը հիմնականում գտնվում է թեքությունների վրա, որոնց մի մասում մեքենաները չեն կարող շահագործվել կայունության կորստի պատճառով: Այդ բացը մասնակիորեն լրացնելու նպատակով մեր կողմից առաջարկվել է թրթուրավոր մեքենայի կմախքի ուղղման սարքավորում, որը հնարավորություն է տալիս լայնական թեքության վրա որոշակիորեն ուղղել թրթուրավոր մեքենայի կմախքը չեզոքացնելով մինչև 7-8° լայնական թեքությունը:



Նկար 1. Թրթուրավոր մեքենայի կմախքի ուղղման սարքավորում 450

Թրթուրավոր մեքենայի կմախքի ուղղման սարքավորումը (նկ.1) բաղկացած է հիդրոզվանից 1, շարժահաղորդակից 2, ծնկածև լիսեռներից (3), շրջանակից (4), շարժական հենարաններից (5), ընթացքային մասի լծակներից (6), զսպանակներից (7), գլանվակներից (8), գլանվակների լիսեռներից (9), հենարանային հղովակներից (10) և թրթուրներից (11):

Այն աշխատում է հետևյալ կերպ. լայնական թեքության վրա ծնկածև լիսեռները, որոնք հողակապերով միացված են շրջանակին և շարժական հենարաններին, հիդրոզվանի և շարժահաղորդակի միջոցով պտտվում են իրենց առանցքի շուրջը, որի հետևանքով թեքությամբ ներքև գտնվող շարժական հենարանը իջնում է, իսկ թեքությամբ վերևից՝ բարձրանում: Արդյունքում նույն չափով իջնում և բարձրանում են ընթացքային մասերի համապատասխան զսպանակները և գլանվակները, քանի որ զսպանակները ներքևի մասով հենվում են գլանվակների լիսեռներին, իսկ վերևի մասով շարժական հենարաններին:

Վերջնական արդյունքը լինում է այն, որ լայնա-

կան թեքության վրա թրթուրավոր մեքենայի կմախքը որոշ չափով ուղղվում է, ինչի շնորհիվ մեծանում է մեքենայի լայնական կայունությունը, իսկ վերջինս բարելավվում է մեքենայի կուրսային կայունությունը, քարշային կցման հատկանիշները և աշխատանքի հարմարավետությունը:

Առանց վերոհիշյալ մեխանիզմի կիրառման թրթուրավոր մեքենայի լայնական ստատիկ կայունությունը բնորոշվում է հետևյալ բանաձևով


$$\operatorname{tg} \beta_{\text{ստ}} = \frac{B+b}{2h} \dots (1),$$

որտեղ $\beta_{\text{ստ}}$ -ը լայնական թեքության սահմանային անկյունն է, B-ն միջթրթուրային հեռավորությունն է, b-ն թրթուրի լայնությունն է, h-ը ծանրության կենտրոնի բարձրությունն է:

Թրթուրավոր մեքենայի լայնական ստատիկ կայունությունը կմախքի ուղղված դիրքում, երբ մեքենայի ծանրության կենտրոնը արդեն գտնվում է O_1 կետում (նկ.2), որոշվում է նույն եղանակով՝ կազմելով մեքենայի վրա ազդող ուժերի մոմենտը A-A առանցքի նկատմամբ: Արդյունքում կստանանք

$$\operatorname{tg} \beta'_{\text{ստ}} = \frac{B+b+2x}{2h-2y} \dots (2),$$

որտեղ x-ը և y-ը նոր մեխանիզմի կիրառման դեպքում մեքենայի ծանրության կենտրոնի տեղաշարժի չափերն են համապատասխանաբար



Նկար 2. Թրթուրավոր մեքենայի լայնական կայունության հաշվարկային սխեման

երկայնական առանցքից դեպի վերև և դեպի մակերևույթ: Ինչպես երևում է (1)-ում և (2)-ում x-ի և y-ի ցանկացած արժեքի դեպքում $\operatorname{tg} \beta'_{\text{ստ}} > \operatorname{tg} \beta_{\text{ստ}}$, հետևաբար $\beta'_{\text{ստ}} > \beta_{\text{ստ}}$, այսինքն նոր մեխանիզմի կիրառման դեպքում թրթուրավոր մեքենայի լայնական կայունությանը բարելավվում է:

ИСПЫТАНИЕ ДИЗЕЛЯ С АНТИФРИКЦИОННОЙ ПРИСАДКОЙ В МАСЛО

Р. Айвазян

Одним из резервов повышения эффективных показателей двигателей внутреннего сгорания является снижение общих механических потерь. При этом, при прочих равных условиях работы двигателя, разных нагрузках и скоростных режимах, уменьшается количество теплоты, отдаваемой охлаждающей среде и снижается тепловая напряженность трущихся деталей двигателя. Снижаются и затраты мощности, расходуемой на привод вспомогательных агрегатов.

Одним из возможных путей снижения потерь на трение двигателя, является улучшение качества принимаемых моторных масел. С этой целью проведены сравнительные испытания автотракторного дизеля Д-240 (без турбонаддува) при его работе на масле М-10Г₂ и с антифрикционной присадкой.

Указанная присадка представляет собой суспензию ультрадисперсного алмазосодержащего материала по ГОСТ 8581-78.

Испытание дизеля проводилось в моторном боксе на электробалансирном стенде оборудованном согласно ГОСТ 18509-80.

При испытании были сняты скоростные и нагрузочные характеристики дизеля. Для оценки мощностно-экономических показателей по этим характеристикам определены мощность и удельный расход топлива при номинальном режиме.

Величины механических потерь $P_{мн}$ определялись соответственно после обкатки двигателя и подачи вышеуказанной присадки в масло.

Величина среднего эффективного давления оценивалась по зависимости, которая является аналитическим выражением нагрузочной характеристики дизеля.

$$P_e = cK_T \eta_i - P_{мн}$$

где c — постоянный коэффициент, зависящий от элементарного состава топлива;

K_T — топливнонапряженность топлива, разработанного впервые;

η_i — индикаторный КПД двигателя.

Сопоставление показателей осуществлялось для номинального режима дизеля (2200 мин⁻¹) согласно характеристикам, снятым при работе двигателя с присадкой и без него. Исходные величины этих показателей были получены после обкатки согласно заводским рекомендациям. После обкатки двигатель проработал 50 часов, при завершении которого эффективная мощность составляла 49,3 кВт, а при работе с присадкой в масло — 50,7 кВт.

Таким образом, рост эффективной мощности дизеля составляет ~ 2,8%. Удельные расходы топлива соответственно равны 272 и 264 г/кВт·ч, то есть снижение удельного расхода топлива при применении антифрикционной присадки составляет 8 г/кВт·ч (3%).

Улучшение мощностно-экономических показателей от дизеля является следствием повышения среднего эффективного давления p_e на 0,017 МПа, из-за снижения общих механических потерь в двигателе.

Анализ физико-химических анализов масла М-10Г₂ с вышеуказанной присадкой и без него показали некоторые расхождения их свойств. Так, например, если вязкость масла с присадкой увеличивалась с 9,8 до 11,10 мм²/с, то без присадки до 12,3 мм²/с. Это означает, что изменение вязкости масла с присадкой носит сравнительно стабильный характер.

Изменение таких показателей, как зольность, коксуемость и щелочное число, показывает, что свойства масла М-10Г₂ с присадкой остаются в лучшем состоянии, чем без присадки.

1. Результаты испытаний показывают, что работа дизельного двигателя с антифрикционной присадкой приводит к уменьшению трения скольжения в со-

пряжениях различных деталей и узлов двигателя, вследствие чего увеличивается эффективная мощность двигателя и снижается удельный расход топлива.

2. Применение антифрикционной присадки с алмазосодержащим материалом может продлить срок службы масла М-10Г₂ до 1,3 раза с уменьшением его расхода до 3%.

О ВЫБОРЕ ОПТИМАЛЬНОЙ СТРАТЕГИИ ТО И ТР АВТОМОБИЛЕЙ

О. Мурадян

Система технического обслуживания и текущего ремонта (ТО и ТР) — это комплекс адекватных восстановительных воздействий к естественному изменению (ухудшению) технического состояния автомобилей в период эксплуатации.

Ухудшение технического состояния автомобилей в период эксплуатации, в силу воздействия множества различных конструктивных и эксплуатационных факторов протекает по разным, но определенным закономерностям.

Выявление закономерностей стохастического распределения изменения технического состояния (износ, ослабление, изгиб, деформация, поломка и т.д.) деталей, узлов, агрегатов и механизмов автомобиля являются основным условием для своевременного прогнозирования и выбора стратегии восстановления технического ресурса автомобиля.

Разработка комплекса восстановительных мероприятий на основе фактических характеристик изменения технического состояния обеспечит необходимый и требуемый уровень технической готовности автомобиля в зависимости от конкретных требований к данному подвижному составу.

Экспериментальные исследования, на основе вышеизложенных теоретических предположений, были проведены на автомобилях марки РАФ—2203 работающих в режиме маршрутных такси в Ереване.

Изучение закономерностей изменения технического состояния автомобилей было проведено, согласно разработанной методике, на основе теории надежности, теории вероятности и математической статистики.

По результатам экспериментальных исследований получены закономерности изменения технического состояния автомобиля и ее составных частей. Выявлено, что в целом изменение технического состояния автомобилей происходит по разным закономерностям распределения отказов, как стационарных случайных величин.

На основе дифференциации степени рассеянности наработок на отказ получены основные обобщенные группы износа и разрушения конкретных деталей и узлов автомобиля (таб. 1).

Таблица 1

№ п/п	Виды износа и разрушений	коэффициент вариации	степень рассеянности
1.	Износ трущихся пар, подшипников, вал, шестерней фрикционных накладок	0,03-0,25	малосредняя
2.	Усталостный излом, при изгибе и кручении износ и расслоение поверхностей подшипников качения, поверхностное выкрашивание зубчатых колес	0,19-0,25	малосредняя
3.	Разрушение по причинам ослабления крепежных соединений, коррозии и ослабление токопроводящих контактов электрооборудования	0,25-0,34	средняя
4.	Разрушение по причинам перегрузок: рычагов передней подвески, пружин, рессор, элементов кузова	0,35-0,7	большая
5.	Разрушение по случайным причинам: прокол шин, поломка стекол системы освещения и сигнализации, обзорных стекол	0,7 и больше	высокая

По сути, дифференциация средней наработки на отказ по степени их рас-
сеянности является основой при разработке системы и режимов ТО.

Выявление изменения технического состояния автомобиля и разработка ре-
жимов ТО и ТР являлись нормативной базой для планирования производства тех-
нического обслуживания, текущего ремонта и материально-технического снабже-
ния автопредприятия.

На основе выявленных показателей эксплуатационной надежности автомоби-
лей РАФ 2203 и с применением положений прикладной теории вероятности [1,2]
была разработана высокоэффективная система прогнозирования и планирования
производства ТО и ТР автомобилей с заданным уровнем вероятности безотказной
работы 0.9 и коэффициента технической готовности парка не менее 0.98. В итоге
получена сервисная программа производства ТО и ТР автомобилей по абсолют-
ным значениям режимов и графика их чередования, (таб. 2).

Таблица 2

№ п/п	Наименование	Единица измер.	ТО-1	ТО-2	ТО-2С
1.	Периодичность	тыс. км.	6.0	12.0	20.0
2.	Грудоемкость	чел. час.	12.1	12.8	7.5
3.	Число операций	ед.	32	56	12
4.	Количество технологических сопряжений	тчк.	95	126	19 arperat.

Здесь ТО — 2С - это введенный впервые вид технического обслуживания, предус-
матривающий замену агрегатов по результатам прогнозирующих моделей и пара-
метрического состояния.

Практические результаты данной системы были внедрены в Ереванском
ОАО маршрутных такси, где они успешно работают уже более одного года.

При этом обеспечивается:

1. Средняя наработка на отказ автомобиля РАФ-2203 6.3 тыс. км.
2. Уровень вероятности безотказной работы 0,9.
3. Гарантируемый уровень технической готовности парка 0,98.
4. Трудоемкость ТР на 1000 км. не более 1.75 чел. час.
5. Экономическая эффективность за год в период с начала до полной адаптации
производства более 17,0 млн. др.

ՃԱՆԱԴՐՅԱՏՐԱՆԱԴՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՅԱՐԱՆԵՐԻ ԱՈԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ. Մուսայելյան, Ա. Չարությունյան

Ճանապարհատրանսպորտային պատահարը (ՃՏՊ) շարժման մեջ գտնվող տրանս-
պորտային միջոցների (ՏՄ) այնպիսի փոխադրեցությունն է միմյանց, հետիոտների կամ
տեղանքի տարրերի հետ, որն առաջ է բերում մարդկային զոհեր կամ մարմնական վնաս-
վածքներ, ՏՄ-ների, կառույցների, բեռների վնասվածքներ կամ այլ տիպի նյութական
վնասներ: ՃՏՊ-ները լինում են տարբեր տիպի վրաբերք, ՏՄ-ների ընդհարումներ և ՏՄ-
ների կայունության կորստի առաջացմամբ պայմանավորված ՃՏՊ-ներ (ՏՄ-ների կողա-
շրջումներ, կողասահքի հետևանքով ՏՄ-ների ճանապարհի սահմաններից դուրս գալը
կամ վթարի ենթարկվելը, և այլն):

ՃՏՊ-ների առաջացման հիմնական պատճառներից են ՏՄ-ների անսարքություննե-
րը: ՃՏՊ-ների առաջացման առավել նպաստում են ՏՄ-ների արգելակային և ղեկային
վարման համակարգերում, շարժական մասում ու կախոցներում տեղ գտած անսարքու-
թյունները: Դրանք կարող են առաջ բերել ՏՄ-ների շարժման ուղղության փոփոխություն
(առանց վարորդի), զրկել վարորդին ավտոմոբիլի շարժման ուղղությունը կառավարելու
կամ շարժման արագությունը իջեցնելու, ընդհուպ մինչև ՏՄ-ն կանգնեցնելու հնարավոր-
ությունից: ՏՄ-ների անսարքություններով պայմանավորված ՃՏՊ-ների կանխարգելման

նպատակով հրատապ է ՏՄ-ների տեխնիկական սպասարկումների ժամանակին և որակ-
յալ անցկացումը, ինչպես նաև երթևեկության ընթացքում վարորդի կողմից ՏՄ-ի տեխնի-
կական վիճակին հետևելը:

ՃՏՊ-ների առաջացումը հաճախ պայմանավորված է լինում նաև անբարենպաստ
ճանապարհային պայմաններով առկայությամբ (ճանապարհի երթևեկելի մասում փոսերը,
քանդված հատվածները քյուրեր, սայթաքում ծածկույթով ճանապարհահատվածներ, սահ-
մանափակ տեսանելիությամբ ու սահմանափակ տեսադաշտով ճանապարհի հատվածներ
և այլն): Դատկապես, շատ կարևոր է ճանապարհի երթևեկելի մասում փոսերի, քանդված
հատվածների, ճանապարհի սայթաքում ծածկույթով հատվածների վերացմանն ուղղված
միջոցառումների կատարումը, քանի որ նշված անսարքությունների առկայությունը կախ-
ված ճանապարհատրանսպորտային իրադրությունից և վարորդների ձեռնարկած գործո-
ղություններից, կարող են նպաստել ՏՄ-ի շարժման կառավարելիության և կայունության
կորստի առաջացմանը:

ՃՏՊ-ների առաջացման պատճառներ են նաև երթևեկության ոչ ճիշտ կարգավոր-
ումը, լուսացույցների և ճանապարհային նշանների ոչ բավարար տեսանելիությունը կամ
համապատասխան ճանապարհային նշանների բացակայությունը և այլն: Նման հանգ-
ամանքները հանգեցնում են վարորդների կողմից ճանապարհատրանսպորտային իրա-
դրության ոչ ճիշտ գնահատմանը:

ՃՏՊ-ների առաջացման պատճառ են նաև հետիոտների, հատկապես անչափահաս
հետիոտների այնպիսի գործողությունները, որոնք հակասում են ճանապարհային երթևե-
կության կանոններին (ՃԵԿ):

ՃՏՊ-ների առաջացումը բավականին հաճախ պայմանավորված է լինում ՏՄ-ների
վարորդների կողմից կատարված, ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններով:
Ընդ որում, վարորդները իրենց այդ գործողություններով ստեղծում են վթարային իրա-
դրություններ և առաջ բերում վտանգ երթևեկության մյուս մասնակիցների համար, իսկ եր-
բեմն էլ վարորդների գործողությունների անհամապատասխանությունը ՃԵԿ-ի պահանջ-
ներին այն է որ նրանք որևէ կոնկրետ ճանապարհատրանսպորտային իրադրությունում
չեն ձեռնարկում հնարավոր ՃՏՊ-ի կանխմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ
կամ այդ միջոցառումները ձեռնարկում են բավականին ուշացումով:

Քիչ չէ նաև ՃՏՊ-ների թիվը, որոնք պայմանավորված են լինում երթևեկության ըն-
թացքում վարորդների կողմից ՏՄ-ների շարժումը ոչ ճիշտ կառավարմամբ կամ ՏՄ-ների
շարժման ոչ ճիշտ ռեժիմի ընտրությամբ: Նման դեպքերում վարորդները հաճախ իրենց
իսկ ոչ ճիշտ գործողությունների հետևանքով զրկվում են ՏՄ-ի ընթացքը կառավարելու
(ՏՄ-ի ընթացքի ուղղությունը փոփոխելու կամ ՏՄ-ի ընթացքի արագությունը իջեցնելու,
ընդհուպ մինչև ՏՄ-ն կանգնեցնելու) հնարավորությունից:

ԱԿՏՈՍՈՐԻԼԻ ՄԱՍԵՐԻ ԼԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԵՖՈՐՄԱՑԻԱԼԵՐԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱԼԵՐԻ ԴԵՏԱՁՈՏՈՒՄԸ ՎԵՐՋԱՎՈՐ ՏԱՐՐԵՐԻ ՄԵԹՈԴՈՎ

Գ. Մուսայելյան, Գ. Անտոնյան

Փոփոխական բեռնվածքներով և փոփոխական ցերմաստիճաններում աշխատող ավ-
տոմոբիլի մասերի նախագծման, նրանց ամրության գնահատման ժամանակ անհրաժեշտ է
հատուկ ուշադրություն դարձնել այնտեղ լարումների, դեֆորմացիաների կոնցենտրացի-
աների առկայության ու նրանց բաշխման վրա: Լարումների կոնցենտրացիաները ճաքերի
գոյացման աղբյուրներ են, որոնք հանգեցնում են մասերի վաղաժամկետ քայքայման:

Լարումների (դեֆորմացիաների) կոնցենտրացիա ընդունված է անվանել նրանց
դաշտի տեղային կտրուկ փոփոխությունը, որն առաջացել է պայմանավորված մասի կա-
ռուցվածքային, տեխնոլոգիական գործոններով կամ արտաքին ազդեցություններով:

Լարումների կոնցենտրացիայի էական առանձնահատկությունն այն է, որ խտացման
չրթակայքում հաճախ առաջանում է բարդ լարվածային վիճակ: Ինչպես ցույց է տալիս
փորձը, լարումների կոնցենտրացիան մեծ ազդեցություն է թողնում փոփոխական բեռն-
վածքով աշխատող մասերի ամրության վրա: Փխրում նյութերից պատրաստված մասերը
կոնցենտրացիայի պատճառով կարող են քայքայվել նաև փոքր ստատիկ բեռնվածքի
դեպքում, ժամկետից շուտ:

Մեծ բեռնվածքի ժամանակ լարումների կոնցենտրացիայի շրջակայքում առաջանում են պլաստիկ դեֆորմացիաներ: Դետեկտոր, նման խնդիրների լուծման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել համապատասխան անցում (պլաստիկության տեսություն):

Ներկայացված աշխատանքում դիտարկվում է ավտոմոբիլի դետալների միջև կոնտակտի շրջակայքում լարումների և դեֆորմացիաների հաշվարկման օրինակ: Դասական կոնտակտային խնդիրների թվին են դասվում գնդերի, գլանների կոնտակտների և կիսահարթության վրա դրոշմի ճնշման խնդիրները: Դրանց լուծման արդյունքները կիրառվում են գլոբման առանցքակալների, ատամնանիվների և այլ հաշվարկներում: Անհրաժեշտ է նշել, որ այստեղ սահմանափակվում են միայն կոնտակտի շրջակայքում լարումների և դեֆորմացիաների վերլուծությամբ (Չերցի խնդիր): Զայտսի է, որ պարզագույն (գլան, գունդ և այլն) մասերի առածգական կոնտակտի խնդիրն ունի փակ տեսքով լուծումներ:

Որպես օրինակ քննարկվում է երկու գլանների կոնտակտի խնդիրը, որի լուծումը իրականացվում է վերջավոր տարրերի մեթոդի օգնությամբ:

Դիտարկվող գլանների համար առաջադրվում են հետևյալ մեծությունները՝ առածգականության մոդուլը - E_1 և E_2 ; Պուասոնի գործակիցը - ν_1 և ν_2 : Գլանների հատույթների շրջանագծի շառավիղները R_1 և R_2 են: Նրանց վրա ազդում է F առանցքային ուժը:

Խնդրի լուծման ժամանակ օգտագործվել է վերջավոր տարրերի մեթոդի համար կազմված ANSYS5.2ED հաշվարկման ծրագիրը: Ծրագրի օգնությամբ ավտոմատորեն իրականացվում է դետալների հատվածի վերջավոր տարրերի անհավասարաչափ բաշխում: Նվազագույն չափերով եռանկյան տեսքով տարրերը տեղակայվում են առավելագույն բեռնավորման կետում: Դեֆորմացվող դետալների մակերևութային կետերի կոնտակտները բեռնվածքի ողջ փոփոխման ընթացքում հաշվի են առնվում եզրային սլայմաններում: Չաշվի է առնված կառուցվածքի և բեռնվածքի սիմետրիկությունը: Ընդունվում է, որ սիմետրիայի առանցքի վրա գտնվող կետերը հորիզոնական ուղղությամբ չեն տեղաշարժվում: Աստիճանական բեռնավորման ընթացքում խնդիրը առածգականից անցնում է պլաստիկի: Լուծման ընթացքում մանրակրկիտ հաշվի են առնում գծային խնդրից ոչ գծայինից անցնելու առանձնահատկությունները:

Արդյունքում ստացվում է լարումների բաշխումը մասերի կոնտակտի շրջակայքում, նրանց առավելագույն արժեքները: Որոշվում են դեֆորմացիոն դաշտը, կոնտակտի մեջ գտնվող կետերի տեղաշարժերը և այլն: Խնդրի լուծման արդյունքն ունի կիրառական կարևորագույն նշանակություն:

Օգտվելով խնդիրների լուծման հաշվարկային մոտավոր մեթոդից հնարավորություն ենք ատանում իրականացնել կոնտակտային խնդրի լուծում բարդ կառուցվածք ունեցող դետալների համար, կատարել անհրաժեշտ վերլուծություններ:

Խնդրի լուծման ճշտությունը ստուգելու համար պարզագույն բեռնավորման դեպքերի արդյունքները համեմատվում են գոյություն ունեցող այլ մեթոդով լուծումների հետ: Նշված խնդրի լուծումը վերջավոր տարրերի մեթոդի օգնությամբ կարելի է իրականացնել նաև փոփոխական բեռնվածքի տակ:

ԱՎՏՈՓՈՒՆԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Երիցյան, Ս. Երիցյան

Ցանկացած արտադրության արդյունավետությունը տնտեսագիտական առումով գնահատվում է երեք հիմնական բնական ցուցանիշներով. աշխատատարությամբ, էներգատարությամբ և նյութատարությամբ, որոնք էլ ձևավորում են արտադրանքի կամ ցուցաբերվող ծառայության ինքնարժեքը: Առանձին ավտոմոբիլի կամ ավտոմեքանիկայի արդյունավետության ընդհանրացնող հիմնական ցուցանիշը կոնկրետ շահագործական պայմաններում իրականացվող փոխադրումների ինքնարժեքն է:

Ավտոփոխադրման ինքնարժեքի հաշվարկի համար օգտագործվող ավանդական ծախսահաշվարկի հոդվածները քաջ հայտնի են: Այս հոդվածների մեջ գերիշխում է կենդանի և նյութականացված աշխատանքի միախառնվածությունը: Այսպես, էներգատարությունը միախառնված է վերադիր ծախսերի հետ: Ընդ որում էներգատարությունը որոշվում է տրանսպորտային աշխատանքի վրա ծախսված վառելանյութի քանակով, որը վերադիր ծախսերի մեջ չի մտնում: Բայց անուղղակի էներգիան (էլեկտրական ու ջերմային) մտնում

է վերադիր ծախսերի մեջ: Անուղղակի էներգիայի ծախսը ավտոմոբիլային տրանսպորտում կազմում է ընդհանուր էներգիայի ծախսի 20-35%: Մասնավորապես ՏԱՆԵՐԻ, Մորոգումների և պահպանման համար մեկ ավտոմոբիլին անհրաժեշտ էներգիան կազմում է այդ ավտոմոբիլի կողմից նրա շահագործման ընթացքում ծախսվող ամբողջ էներգիայի ծախսի 25% [1]:

Փոխադրումների նյութատարությունը, որը ցույց է տալիս տրանսպորտային աշխատանքի վրա կատարվող շահագործված նյութերի քանակը, նույնպես միախառնված է այդ հոդվածների (ՏԱ և ԸՆ վրա կատարվող ծախսեր) և արտախառնվում է նաև դողերի ծախսի մեջ:

Վերոհիշյալ համառոտ վերլուծության նպատակը ինքնարժեքի հաշվարկի գոյություն ունեցող մեթոդիկային քննադատաբար վերաբերվելն ու այդ ուղղությամբ նոր մշակումների իրականացումն է:

Փոխադրման համար անհրաժեշտ նյութականացված աշխատանքի ծախսերը բնութագրում են ավտոտրանսպորտային արտադրության (փոխադրման գործընթաց) ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Որքան փոքր են այդ ծախսերը, այնքան փոքր է շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությունը և հակառակը:

Դա նշանակում է, որ ավելի ծիշտ կլինի աշխատանքի արտադրողականության անը գնահատելու, գնահատենք նաև փոխադրումների էկոլոգիական վնասակարության մակարդակը:

Ներկայումս ավտոտրանսպորտային կազմակերպությունները, ինչպես նաև արտադրության այլ ճյուղերի ձեռնարկությունները զբաղված են շարժակազմի կողմից արտանետվող վնասակար նյութերի ծավալների հաշվարկներով և դրանց հիման վրա համապատասխան հարկեր մուծելով: Սակայն այդ հարկերը, հասկանալի է, չեն կարող լուծել աղքատացող բնության պահպանման հարցերը, որովհետև բնապահպանության հիմնականորեն արմատները խորն են և ճյուղավորված են արտադրության ու պահանջարկի մեջ: Խնդիրը կարող է լուծվել «էկոլոգիական տնտեսաշրջան» մտցնելու ճանապարհով, որը պետք է կառուցվի արժեքի օրենքի օբյեկտիվ գործունեության հիման վրա: Թվում է ժամանակն է մշակել նոր գիտական ճյուղ էկոլոգապահություն:

Որ՞ն է կայանում այդ ճյուղի էությունը: Էկոնոմիկայի երեք գլխավոր ցուցանիշները աշխատատարությունը, էներգատարությունը և նյութատարությունը, համարվում են հասարակական անհրաժեշտ ծախսեր: Նրանց կառավարման բացակայության դեպքում իմաստագրվում են «տնտեսաշրջան» և «միջոցների խնայողություն» հասկացությունները: Բայց այն ծախսերը, որոնք նպատակաուղղված են շրջակա միջավայրի պահպանմանը (փրկությանը), կյենսականորեն առավել անհրաժեշտ են: Ներկայումս նշված առումով համապատասխան գնահատող ցուցանիշ չկա: Որպես այդպիսին կարող է հանդես գալ էկոնոմիկայի չորրորդ գլխավոր ցուցանիշը՝ փոխադրման էկոլոգատարությունը, որին հատկանշական են «չառ» և «քիչ» հասկացությունները, էությունը հետևյալն է. բնությունից որքան և ինչ է ըստում տվյալ ավտոմոբիլը (ձեռնարկությունը) և թափոնների տեսքով որքան և ինչ է վերադարձնում մեկ շնչի, միավոր մակերեսի, միավոր տրանսպորտային աշխատանքի հաշվով էկոլոգատարության բաղադրամասերն են թթվածնատարությունը, ջրատարությունը, հողատարությունը և այլն: Իմանալով այս գործոնները և բնական պաշարների վարձաչափերը ինչպես նաև շրջակա միջավայրին հասցվող վնասի արժեքները, կարելի է որոշել փոխադրման էկոլոգիական վնասի մակարդակը և սոցիալ-տնտեսական վնասի չափը, որը մտնում է ավտոփոխադրման ինքնարժեքի մեջ:

Գուցե առողջապահության բնագավառի մասնագետները հեշտությամբ կարողանան հաշվել մթնոլորտ արտանետված ածխածնի օքսիդի ազդեցությունը (դրանով արտախախտված) ազգաբնակչության հիվանդացության մակարդակի վրա՝ մեկ շնչի հաշվով, տարեկան կտրվածքով: Սակայն դրա հետ մեկտեղ բացակայում է այդ վնասի փոխառուցման չափի որոշման մեթոդիկան: Այստեղ բարդությունն այն է, որ մթնոլորտի աղտոտման մասնակցում են տարբեր գերատեսչություններ ու ֆիրմաներ, անձնական օգտագործման տրանսպորտը և այլ ղծվար հաշվարկվող գործոններ:

Սակայն գործը մեր կարծիքով կեշտանա, եթե էկոլոգիական տնտեսաշրջանի մեջ մտցվի և մշակվի «էկոլոգիական ռեյթինգ» ենթահամակարգը: Այս գաղափարը հնարավորություն կընձեռնի ստեղծել բիոսֆերայի բազմաբաղադրիչ աղտոտման հզորության ինտեգրված միավոր, ինչպես նաև բիոսֆերայի բնական ռեսուրսների օգտագործման գնա-

հատման միավոր: Գրանով կարող են համեմատել ավտոմոբիլն ավտոմոբիլի հետ, ֆիրման ֆիրմայի հետ և այլն, միաժամանակ դրանք դասակարգել ըստ վտանգավորության: Այդպիսի ցուցանիշը կարող է կապվել արտադրության էկոնոմիկայի հետ, մասնավորապես գնի հետ (էկոլոգիական ռեյթինգի միավորի արժեքի հետ): Այս ուղղությամբ անհրաժեշտ է կատարել բազմակողմանի տեսական ու փորձնական հետազոտություններ ավտոմոբիլիստների, քիմիկոսների, կենսաբանների, էկոլոգների, բժիշկների, բուսաբանների, մաթեմատիկոսների ու տնտեսագետների մասնակցությամբ:

Ելնելով էկոլոգիայի տեսանկյունից, կարող ենք պնդել, որ ժամանակն է ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի համար մտցնել էկոլոգատարության արժեք, որը պետք է բաժանվի պատվիրատուի (քանի որ նա նույնպես օգտվում է բնության բարիքներից և շրջակա միջավայրին համապատասխան վնաս է հասցնում) և փոխադրող կազմակերպության վրա: Այստեղ կարևոր է նաև ավտոարդյունաբերության կողմից թողարկվող ավտոմոբիլների էկոլոգիական ռեյթինգի որոշումը: Երջապատող միջավայրի համար առավել վնասաբեր շարժակազմի համար գործարանները պետք է տնտեսական պատասխանատվություն կրեն, որը նրանց կստիպի թողարկել էկոլոգիապես մաքուր ավտոմոբիլներ:

1. Могилы В.П. Использование вторичных ресурсов на предприятиях автотранспорта. Киев, Техника 1988. С. 40-45.

МОМЕНТ СОПРОТИВЛЕНИЯ ПРИ ПУСКЕ ДИЗЕЛЯ

А. Оганесян

Момент сопротивления прокручиванию коленчатого вала дизеля M_c при пуске зависит от многих факторов: температуры окружающей среды; вязкости моторного масла; частоты вращения коленчатого вала; степени сжатия; коэффициента, характеризующего геометрические параметры поверхностей трения деталей дизеля; объема, числа и расположения цилиндров и т.д.

Перечисленные факторы в основном отражаются на двух главных составляющих момента сопротивления: момента от сил трения в кинематических парах M_{mp} и момента от давления рабочей смеси на поршень M_r (момент от газовых сил):

$$M_{c,cp} = M_{mp} \pm M_r. \quad (1)$$

Изучение работ по пуску дизелей показывает, что средняя величина момента сопротивления прокручиванию коленчатого вала определяется главным образом от момента трения M_{mp} , а колебания мгновенных значений относительно средней величины момента от сил давления газов M_r .

В изученных работах для определения момента сопротивления прокручиванию коленчатого вала дизеля разработаны методы определения среднего момента сопротивления

$$M_{c,cp} = M_{mp}; \quad M_{c,cp} = KA_{gp} v^2 n^y \varepsilon^z T^m, \quad (2)$$

где K — постоянный коэффициент определяемый экспериментально; A_{gp} — коэффициент, характеризующий геометрические параметры поверхностей трения двигателя; v — кинематическая вязкость моторного масла, в ссм; n — частота вращения коленчатого вала дизеля; ε — степень сжатия; T — температура окружающей среды; x, y, z, m — показатели степени. Коэффициент K и показатели степени x и y для дизелей по данным НАМИ равны: $K = 23,10^6$; $x = 0,33$; $y = 0,25$. Коэффициент A_{gp} определяется

$$A_{gp} = F_n \frac{2r}{\pi} + F_w \frac{d_w}{2} + F_r \frac{d_r}{2} + 0,1F_n \frac{d_r + d_w}{2}, \quad (3)$$

где F_n, F_w и F_r — площади поверхностей трения соответственно поршня, шатунных и коренных подшипников, см²; r — радиус кривошипа, см; d_w и d_r — диаметры шатунных и коренных шеек, см.

Однако практическое использование зависимости (2) пока не возможно, так как до сих пор не накоплены достаточно достоверные значения показателей степени z и m , которые должны быть определены экспериментальным путем.

Для дизелей с относительно большей неравномерностью движения в литературе рекомендована зависимость

$$M_{c,cp} = \frac{V_n Z}{1,257} \left[0,05z + 0,3\sqrt{\delta} + KA_{gp} \cdot 10^{-6} \left(1 + \frac{\delta^2}{8} \right) \sqrt{171} \right], \quad (4)$$

где V_n — рабочий объем цилиндра, литр; z — число цилиндров; δ — степень неравномерности. Коэффициент A_{gp} определяется

$$A_{gp} = \frac{1}{\psi_n} \frac{H_n}{D} \frac{S}{D} + \frac{2}{\psi_w} \left(\frac{d_w}{D} \right)^2 \frac{\ell_w}{S} \frac{D}{S} + \frac{2}{\psi_r} \left(\frac{d_r}{D} \right)^3 \frac{\sum \ell_k}{d_r Z} \frac{D}{S}, \quad (5)$$

где ψ_n, ψ_w, ψ_r — относительные зазоры соответственно в паре поршень-цилиндр, шатунных и коренных подшипниках; H_n — высота поршня; D — диаметр цилиндра; S — ход поршня; ℓ_w — длина вкладышей шатунных подшипников; $\sum \ell_k$ — суммарная длина вкладышей коренных подшипников.

С мнением авторов о независимости $M_{c,cp}$ от температуры окружающей среды и сорта масла нельзя согласиться, так как после остановки горячего двигателя масло с трущихся поверхностей стекает, но в любом случае на них остается тонкая масляная пленка, и при трогании коленчатого вала холодного двигателя между трущимися поверхностями появляется граничное трение.

В литературе предлагается зависимость для определения $M_{c,cp}$, где учитывается момент трогания, коэффициент неравномерности момента и положение коленчатого вала

$$M_{c,cp} = (M_{c,0} + K_1 A_{gp} v^2 n^y) \left(1 + \frac{\mu}{2} \cos \frac{z}{2} \alpha \right), \quad (6)$$

где z — число цилиндров; α — угол поворота коленчатого вала двигателя; μ — коэффициент неравномерности момента. Однако, автор также принимает, что $M_{c,0}$ не зависит от температуры.

Исходя из изложенного, мы для исследования динамики системы использовали экспериментальные кривые, полученные в НАТИ для дизелей, которые аппроксимировали функцией

$$M_{c,cp} = M_0 + B_0 n^y, \quad (7)$$

где M_0 — начальный момент ($n=0$); $B_0 = KA_{gp} v^2$. Значения M_0 найдены при аппроксимации кривых.

Величина момента от газовых сил при прокручивании дизеля в процессе пуска определится по зависимости

$$M_r = V_n P_c K(\varepsilon_g) + W(\varepsilon_g), \quad (8)$$

Суммарный момент сопротивления прокручиванию коленчатого вала дизеля при пуске на основании выражений (7) и (8) можно представить в виде

$$M_c = M_0 + B_0 n^y \pm (V_n P_c K(\varepsilon_g) + W(\varepsilon_g)). \quad (9)$$

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳՅՈՒՄ

4. Մոտիկյան

Հուլիսյան տնտեսության անցման շրջանում ավտոտրանսպորտային միջոցների զանգվածային մասնավորեցման արդյունքում հսկայական թվով մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ դարձան անհատների սեփականություն: Հասկանալի է, որ մասնավորեցված փոխադրականների տերերը պետք է ավտոմեքենաներն օգտագործեն եկամուտ ստանալու կամ այլ կարիքները հոգալու նպատակով: Բայց դրանց շահագործումը բարդ կազմակերպական, տեխնիկական և իրավական նորմատիվ այնպիսի միջոցառումների մի շրջապական ամբողջություն է, առանց որի փոխադրումների կազմակերպումը վերածվում է չկարգավորված տարերային շուկայի բոլոր բացասական հետևանքներով:

Այսօրվա վիճակով ՀՀ-ում, այդ թվում Երևանում, բեռների և ուղևորների փոխադրումների գերակշիռ մասը կատարվում է մասնավոր սեփականատերերի տրանսպորտային միջոցներով (արտոնագրված կամ չարտոնագրված): Կա՞ր արդյոք մեզանում ավտոտրանսպորտային փոխադրումների կազմակերպման բավարար նորմատիվային տեխնիկական և իրավական հիմնահող: Պետական ո՞ր կառույցն է կարգավորում այդ ոլորտը, ինչպե՞ս և ո՞վ է այն հսկում:

Կարելի է վստահորեն նշել, որ ՀՀ-ում ավտոտրանսպորտային ծառայությունների շուկան ձևավորվել է տարերայնորեն, պահի ազդեցությամբ, զուրկ է պետական կարգավորման որևէ արդյունավետ լծակից և գործում է զուտ պահանջարկի և առաջարկի շրջանակներում: Փոխադրանու ծառայությունների շուկայի նկատմամբ հսկողություն գրեթե չկա: Մինչդեռ շուկայական տնտեսության զարգացումը մեծապես պայմանավորված է տրանսպորտային ծառայությունների շուկայի կառուցվածքով: Փաստ է, որ ապրանքանյութական արժեքների ինքնարժեքում փոխադրական ծախսերն զգալի են, իսկ եթե փոխադրական ծառայությունների շուկան կարգավորման եղանակ չունի, ապա փոխադրական ծախսերը հաճախ նույնիսկ գերազանցում են որոշ ապրանքների ինքնարժեքը: Հենց այդ երևույթն է այսօր նկատվում Հայաստանում:

Բազում օրինակներով կարելի է ապացուցել, որ փոխադրամիջոցների ծառայության շուկայի տարերային ձևավորման, անհրաժեշտ նորմատիվային և տեխնիկական պահանջների հսկողության բացակայության պատճառով խախտվում են այդ շուկայի օգտվող սպառողների իրավունքները: Թվում է ավանդույթ է դառնում ցանկացած ավտոմեքենայով ցանկացած ապրանք տեղափոխելը: Թեթև մարդատար ավտոմեքենայի ուղևորասրահում կտեսնես անարգել տեղափոխվող գյուղատնտեսական մթերք (միրգ, բանջարեղեն, կաթնամթերք), արդյունաբերական ապրանքներ:

Երևանի կենտրոնական մասում պարենային, արդյունաբերական և այլ ապրանքատեսակներ առևտրի կետերին մատակարարում են 8-10 տ. բեռնատարողության ծանր ավտոմեքենաներով, որոնց մուտքը քաղաքի կենտրոնական փողոցներ, որպես կարգ, քաղաքակիրթ երկրներում արգելված է անվտանգ երթևեկություն ապահովելու, բնապահպանական, ճանապարհածածկույթի պահպանման և այլ նկատառումներով:

Այդպիսի իրավիճակ է նաև ուղևորատար փոխադրամիջոցների ծառայությունների շուկայում: Մասնավոր երթուղային ուղևորատար փոխադրամիջոցներից օգտվող քաղաքացիներն անվտանգ տեղ հասցնելու որևէ երաշխիք չունեն: Ո՞վ է կատարում ուղևորներ փոխադրող տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումն ու նորոգումը կամ հսկում ավտոմեքենայի տեխնիկական վիճակը և ամենակարևորը՝ ունի այդ գործով զբաղվելու իրավունք:

Վստահորեն կարելի է ասել, որ մարդատար փոխադրամիջոցների զգալի մասը, որը շահագործվում է ներքաղաքային և միջքաղաքային երթուղիներում, ունի անվտանգ երթևեկությանն սպառնացող անսարքություններ, ընդ որում անվտանգությունն ապահովող հանգույցներում և սարքավորումներում: Վերջապես, խնդրի կարևորագույն կողմերից մեկը, որքանո՞վ են արտոնագրված և աշխատող փոխադրամիջոցների տերերը բյուջեի հանդեպ կատարում իրենց պարտավորությունները:

Մտավոր հաշվարկները վկայում են, որ միայն Երևանում աշխատող մոտ 2,5 հազար երթուղային տաքսիները յուրաքանչյուր ամիս պետք է բյուջեին հատկացնեն շուրջ 106,0 մլն. դրամ: Բացի այդ, արտոնագրված միջմարգային ուղևորափոխադրումներից և բեռնափոխադրումներից բյուջեի զանձումները պետք է կազմեն համապատասխանաբար

